վեստների մօտալուտ խորտակումին իրենց խակ ձեռքով:

Հեւ ի հեւ սպասում է եւ արտասահմանեան Ռուսիան, փախստականների այն խայտաբղէտ, ուշակորոյս, անկամ եւ անղեկ բազմութիւնը, որ Ստալին–Տրոցկի բաղխումի մէջ իր հայրենիքի բախտն է վնտռում:

Կ'արդարանա՞ն արդեօք այս սպասումները:

Համայնավար լուրջ շարժումներ տեղի ունեցան եւ չատ ուրիշ երկրներում. Գերմանիա, Աւստրիա, Հունգարիա եւ Բուլգարիա փոխ առ փոխ իրենց անհնարին պարտութեան հարկը տուին պատմութեան եւ համայնավարական ծանր փոթորկումներ տեսան: Անգլիական հսկայ սեւ գործադուլը իր հիմքում դարձեալ սովետական դրամն ու պրոպագանդն ունէր անշուշտ:

Եւ սակայն, բոլոր յիշեալ երկրներում մոսկովեան խռովութիւնը մի քանի օրում կամ շաբաթներում խեղդուեց համաժողովրդական դրոհի տակ, ու Գ. Ինտերնացիոնալի դաւադիր սադրանքները մնացին անպտուղ ու ամուլ փորձեր: Ցիշատակե՞նք արդեօք Իտալիան, ուր համայնավարութիւնը ծունկի է եկել Ֆաշիզմի հարուածների տակ եւ Ֆրանսան, ուր հասարակական կարծիք ու կառավարութիւն մի տեսակ արհամարհոտ ներողամտութեամբ են նայում Մոսկուայի յայտնի՝ թէ ծածուկ գործակալների, որքան աղմկարար, նոյնքան դատապարտուած ճիգերին յուզելու քաղաքական հրապարակը:

Կրեմլինի դիկտատորները միլիոններ վատնեցին Արեւմուտքը Արեւելքի պէս փոթորկելու համար. Գ. Ինտերնացիոնալը ռուս կիսաքաղց աշխատաւորութեան քրտինքի պտուղները շորթեց իր քաղաքական ինտրիգներն ու պրոպագանդը վարելու համար աշխարհում, եւ ամէն անգամ իր հաշիւների մէջ սխալուեց: Քաղաքակիրթ ազգերը ըմբոստ մնացին սովետական հրապոյրների հանդէպ, ու նրանց քարոզները մեռան անարձագանգ, դէթ ստուար մեծամասնութեան համար: Արեւմուտքի եւ Ամերիկայի պրոլետարիատն իսկ երես է դարձրել Մոսկուայի փրկիչներից եւ յարել Բ. Ինտերնացիոնալին, խոյս տալով բոլշեւիզմից, ինչպէս ժանտախտից: Եւ Մոսկուայի արտասահմանեան գործակալների եւ հետեւորդների ճիգերը միանալ, մի ճակատ կազմել արտասահմանի ընկերվարութեան հետ բաղխուեցին բուռն դիմադրութեան ու ձախողեցան, թէ՛ Անգլիայում, թէ՛ Ֆրանսայում եւ թէ այլ երկիրներում:

Այսպիսով ամէն տեղից բոլշեւիզմը վռտարւում է որպէս մի անկոչ ու վտանգաւոր հիւր. բոլոր դռները փակւում են այդ կասկածելի անցորդի առաջ, որ հիւրընկալ որեւէ չէմք ոտք կոխելուն պէս, հրդեհի է մատնում ասպնջական յարկն ու բնակութիւնը:

Մերժուած ու հալածական՝ բոլշեւիզմը սակայն չատ պինդ է թառել Ռուսիայում ու դեռ շարունակում է քմահաճօրէն վարել 150 միլիոնոց ժողովուրդներին ինչպէս մարակի տակ տնքացող երիվարներ: Սովետական արտառոց բեժիմը շարունակում է դիմադրաւել սպառնալի վտանգները եւ հետապնդել իր ընտրած կարմիր ուղին, հեղնելով ամէն տրամաբանութիւն տնտեսական, հասարակական ու պատմական ամէն օրէնք:

Քաղաքակիրթ բոլոր ազգերը, ի բաց առեալ չատ փոքրաթիւ աշխատաւորութիւնը, երես են դարձրել բոլշեւիկներից եւ միայն ռուս ժողովուրդն է, որ անսահման համբերութեամբ ու հնազանդ՝ տանում է հակամարդկային ու խելագար բեժիմը անմռունչ, որպէս ուխտուած նոխազ: Միայն ռուս դիւղացին է, այդ յաւիտենապէս չահագործուած մուժիկը, որ իր վաստակն ու զաւակների արիւնը թողել է Մոսկուայի մի բուռն արկածախնդիրների քմահաճոյքին: Միայն ռուս բանուորութիւնն է, որ իր տրորուած ուսերով ու բզկտուած բազուկներով շարունակում է պատուար կազմել պատմութեան մէջ չը տեսնուած այս բռնութեան, որի տակ մեռնում են ե՛ւ ազատ միտք, ե՛ւ ազատ խիղճ, ե՛ւ ազատ աշխատանք. որ փչրում է ամէն ստեղծագործական կորով, բանականութեան թռիչքը սանձում, եւ կամքերը ճըկում, ծունկի բերում մի պատառ չոր հացի հոգսի առջեւ. պէտք է տեսնել, դիտել ու լսել անմիջապէս Ռուսիայից հեւ ի հեւ հասնող որեւէ մէկին որ տարիներ է անցրել սովետական բեժիմի տակ, հասկանալու համար, որ